



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

N _____

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ԱՍՈՐԱԿԱՆ ԱՄԱՆՈՐԻ՝ ՀԱԲ-ՆԻՍԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Կոտայքի մարզի ասորական համայնքի սիրելի՛ ներկայացուցիչներ,

Թեև հանրապետությունում արտակարգ դրությամբ պայմանավորված՝ ուժեղացված հսկողություն է և ըստ այդմ, ծանրաբեռնված աշխատանքային օրակարգ ունեմ, բայց չեմ կարող ձեզ չշնորհավորել զարնան զարթոնքն ազդարարող գեղեցիկ տոնի՝ ասորական Ամանորի՝ Հաբ-Նիսանի կապակցությամբ:

Առանձնահատուկ ուզում եմ շնորհավորել մեր մարզում բնակվող ասորիներին՝ հայտնելով մեր պատրաստակամությունը՝ այսուհետ ևս նպաստելու և աջակցելու ասորական համայնքի ցանկացած նախաձեռնության՝ միտված մեր ընդհանուր հայրենիքի բարօրության և մեր երեխաների լուսավոր ապագայի:

Սիրելիներս,

Պատմության ընթացքում հայ և ասորի ժողովուրդները միասնաբար են պայքարել բոլոր մարտահրավերների դեմ, ինչը նաև անում ենք այսօր ու հիմա և վստահ եմ, որ միայն միասնական ու համախմբված է մեզ հաջողվելու հաղթահարել այս ճգնաժամը:

Առո՛ղջ և երջանիկ եղեք ձեր ընտանիքների հետ միասին:

Շնորհավո՛ր Հաբ-Նիսան:

Հարգանքով՝

Ռ. Պետրոսյան